ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

13.05.2024թ.
N 5/17-166

«Ագաստ» ՍՊԸ-ի
տնօրեն Գ.Մուրադյանին
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տ.Պետրոսյան 31/1,
Էլ. Փոստի հասցե՝ agastllc@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

/Պայմանագիրը միակողմանի /որոշ չափաբաժինների մասով/ լուծելու մասին/

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ -ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Ագաստ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 07.02.2024 թվականին կնքվել է թիվ N ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-2 «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիրը /այսուհետև՝ նաև Պայմանագիր/:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:*

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ *Գնորդն իրավունք ունի «միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.*

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ *Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝*

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի»:

Պայմանագրի 2. 4. 1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը:*

2024թ. ապրիլի 26-ին Գնորդը, Վաճառողի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով, պատվիրել է մատակարարել ստորև ներկայացվող աղյուսակում ներառված դեղորայքը, սակայն՝ Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում որև մատակարարում տեղի չի ունեցել:

Պայմանագրի վերոնշյալ կետերի հիման վրա կարող ենք պնդել, որ Վաճառողի կողմից թույլ է տրվել Պայմանագրային պարտավորության էական խախտում, որի հիման վրա Գնորդը իրավունք է ստանում

Անվանում	Չափաբաժին	Չափման միավոր	Պատվիրված քանակ	Փաստացի մատակարարված քանակ
Էնոքսապարին 0.4մլ	18	հատ	1000	150
Լիզինոպրիլ 10 մգ	28	հատ	500	0
Ռիվարոքսաբան 20 մգ	40	հատ	280	0
Մետրոնիդազոլ	72	հատ	400	0

Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ Գնորդը որոշում է միակողմանի լուծել Պայմանագիրը աղյուսակում նշված չափաբաժինների մասով:

Սույն դեպքում Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Վաճառողին սպասարկող բանկին՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 3 746 835 ՀՀ դրամ և 2 497 890 ՀՀ դրամ «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի «Ակբա Բանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 220300126152000 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ *անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե* ***«խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:***

Վերոգրյալ կարգավորումները հաշվի առնելով՝ առաջարկում ենք սույն Ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ -ի «Ակբա Բանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 220300126152000 հաշվեհամարին փոխանցել վերը նշված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները, հակառակ դեպքում Վաճառողը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Վաճառողի տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Հ. ԲԱԼՅԱՆ

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am